**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

N 1698-Ա

«25» հուլիսի 2025թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին (պայմանագրի կողմին) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի ծածկագիրը | Պայմանագրի | | | | | Պայմանագրի կողմի /մատակարար, կատարող, կապալառու/ | | | Պատվիրատուի անվանումը | Պայմանագիրը լուծելու վերաբերյալ ծանուցումը հրապարակելու ամսաթիվը | Իրավական հիմքը | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծածկագիրը | չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | չափաբաժնի գնման գինը /ՀՀ դրամ/ | չափաբաժնի գինը /ՀՀ դրամ/ | անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 |
| ՏԿԵՆ-ԲՄԽԾ ՁԲ-25/14 | ՏԿԵՆ-ԲՄԽԾ ՁԲ-25/14-2 | 3 | Տարածքային կառավարման մարմինների աշխատակիցների վերապատրաստման հեռավար դասընթաց | 600 000 | 597 600 | «ԳԵՎՈՐԳ ԻԱՆԿՈՆՑԵՌՆ» ՍՊԸ | 06952546 | ՀՀ, ք. Ստեփանավան, Չարենցի 179-28 | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | 15.07.2025թ. | Պայմանագրի 2.1.3 կետ և 2.1.3 կետի «ա» ենթակետ/ մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին/ | Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո սահմանված կարգով 2025 թվականի ապրիլի 3-ին Կատարողին ծանուցվել է Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի նախագիծը: Ծանուցմամբ Կատարողին առաջարկվել է իր կողմից հաստատված Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի երկու բնօրինակների հետ միաժամանակ Պատվիրատուին ներկայացնել Պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված՝ ծառայությունների մատուցման պարտադիր պայման հանդիսացող բարձրագույն կրթությամբ կադրերի պատրաստման ոլորտի առնվազն երեք տարվա փորձը հավաստող փաստաթղթերը:<br>Կատարողը 16.04.2025թ. թիվ Գ/16.04-001 գրությամբ Պատվիրատուին ներկայացրել է իր կողմից հաստատված Պայմանագրի թիվ 1 համաձայնագրի երկու բնօրինակները, սակայն Պայմանագրի հավելված 1-ով սահմանված, ծառայությունների մատուցման պարտադիր պայման հանդիսացող վերապատրաստում անցկացնող կազմակերպության բարձրագույն կրթությամբ կադրերի պատրաստման ոլորտի առնվազն երեք տարվա փորձը հավաստող փաստաթղթերը չեն ներկայացվել:<br>Պատվիրատուն 12.06.2025թ. № ԱԵ//19759-2025 գրությամբ դիմել է Կատարողին Համաձայնագիրը կնքելու և Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման գործընթացը մեկնարկելու համար, մինչև 2025 թվականի հունիսի 18-ի ժամը 18:00-ն |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | Պայմանագրի N 1 հավելված տեխնիկական բնութագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված, ծառայությունների մատուցման պարտադիր պայման հանդիսացող փաստաթղթերը ներկայացնելու պահանջով, միաժամանակ հայտնելով, որ չներկայացվելու դեպքում Պատվիրատուն կձեռնարկի գնումների մասին օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով Պայմանագրի միակողմանի լուծման գործընթաց: Ի պատասխան վերոնշյալ գրությանը Կատարողը հայտնել է, որ ներկայացնում է պահանջվող փաստաթղթերը, միաժամանակ հայտնելով, որ գրությամբ պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են նաև «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման փուլում: Պատվիրատուն 20.06.2025թ. № ԱԵ//20960-2025 գրությամբ հայտնել է Կատարողին, որ բարձրագույն կրթությամբ կադրերի պատրաստման ոլորտի առնվազն երեք տարվա փորձի պահանջը «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում սահմանվել է ոչ թե որպես որակավորման չափանիշ, այլ որպես պայմանագրի կատարման պարտադիր պայման և Կատարողից այդ պարտադիր պայմանին բավարարելու վերաբերյալ փաստաթղթային հիմքերը կարող էին պահանջվել բացառապես պայմանագրի կատարման փուլում՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, ինչը և կատարվել է: Կատարողի կողմից ներկայացված «բարձրագույն կրթությամբ կադրերի պատրաստման ոլորտի առնվազն երեք տարվա փորձը» հավաստող փաստաթղթերը պատասխանատու ստորաբաժանման կողմից հիմնավոր չեն համարվել, որի պարագայում Կատարողի կողմից «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/14-2» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ծառայություններ մատուցվել չեն կարող: |

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 29-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին: Վերոգրյալի մասին նշվել է Կատարողին 15.07 .2025թ. ներկայացված «ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/14-2» ծածկագրով գնման պայմանագրի միկողմանի լուծման N ԱԵ//17732-2025 ծանուցման մեջ: Սակայն վերջինիս կողմից 25.07.2025թ. դրությամբ N « ՏԿԵՆ-ԲՄԽԾՁԲ-25/14-2» ծածկագրով գնման պայմանագրի որակավորման և պայմանագրի ապահովումների վճարումները հավաստող փաստաթղթեր չեն ներկայացվել: |

7/25/2025

X 

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ա. ԵՐԻՑՅԱՆ**

**ք. Երևան**